Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 23 հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը նախագահությամբ՝ Հ.Նազարյանի, անդամակցությամբ՝ Հ.Դանիելյանի եւ Ռ.Պապայանի, քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի կողմից ներկայացված դիմումի ընդունելիության հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 9-րդ մասի դրույթների սահմանադրականությունը, համաձայն որոնց՝ սահմանադրական դատարանն անհատական դիմումներով գործի քննության արդյունքում որոշում կայացնում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 5-րդ մասի առաջին եւ երկրորդ պարբերություններով նախատեսված ժամկետներում:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասի համաձայն անհատական դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Վիճարկելով վերոհիշյալ օրենքի 69 հոդվածի 9-րդ մասում նախատեսված ժամկետների (օրենքի 68 հոդվածի 5-րդ մասի 1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանված) սահմանադրականությունը, դիմումատուն սահմանադրական դատարանում անհատական դիմումներով գործերի քննության առարկան նույնացնում է ընտրական վեճերի հետ, որով եւ փորձում է հիմնավորել դատավարական առավել կարճ ժամկետների կիրառման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ, օրենքով նախատեսված կարգով իր կողմից պետական տուրք չվճարելու հանգամանքը:

Ընտրական գործընթացների հետ կապված Սահմանադրական դատարանի լիազորությունները նախատեսված են ինչպես ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3.1 կետում, այնպես էլ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74 հոդվածում, որտեղ եւ նախատեսված են դատավարական առավել սեղմ ժամկետներ (74 հոդվածի 3-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ եւ 19-րդ մասեր):

Դիմումատուն ներկայացրել է նաեւ միջնորդություններ, որոնցում բարձրացված հարցերը վերաբերում են իր նախկին դիմումի հիման վրա քննության ընդունված գործին, հետեւաբար սույն դիմումի շրջանակներում քննարկվել չեն կարող:

3. Նկատի ունենալով, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի կարգով սահմանադրական դատարանում քննության են ընդունվում կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով անձանց նկատմամբ կիրառված

օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու (եւ ոչ թե՝ ընտրական վեճերի) վերաբերյալ դիմումներ, սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը գտնում է, որ դիմումատուի փաստարկները, իր կողմից վիճարկվող նորմի գործողության կասեցման վերաբերյալ միջնորդությունը, ինչպես եւ՝ պետական տուրք չվճարելն ակնհայտ անհիմն են՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածում սահմանված կարգով վերոհիշյալ դիմումը քննության ընդունելու համար, ուստի ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասով, 32 հոդվածով եւ 69 հոդվածի 7-րդ մասով, ՀՀ ՍԴ 2-րդ դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ռուբեն Թորոսյանի դիմումի (կից միջնորդություններով) քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝ Հ.Նազարյան

Անդամներ՝ Հ.Դանիելյան

Ռ.Պապայան